

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ

Նոյեմբերի 17-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում, տեղի ունեցաւ ամերիկահայ բանաստեղծ, հրապարակագիր և հասարակական գործիչ Կարապետ Սիտալի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյակին նվիրված մեծարման երեկո, որին ներկա էին գրողներ, գիտնականներ, արվեստի աշխատողներ, ուսանողներ, մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ։

Կ. Սիտալը ծնվել է 1891 թվականին Շատախ գավառի Կաշտ գյուղում։ Նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Վանի և Թավրիզի ամերիկյան կոլեջներում։ Գրական իր առաջին փորձերը կատարել է 1911—1912 թվականներին։

1914 թվականին Կ. Սիտալը մեկնել է ԱՄՆ, ուր հաստատվել է ընդմիշտ և նվիրվել գրական-հասարակական գործունեության։ Ավելի քան 50 տարի Կ. Սիտալը գրել է «բազմաթիվ պոեմներ, բանաստեղծություններ, որոնք տոգորված են ջերմ սիրով դեպի աշխատանքի մարդը, դեպի սովետական ժողովուրդն ու Հայրենիքը։ Նրա բանաստեղծական վաստակը հենվում է ժողովրդական բանահյուսության հիմքերի վրա»։

ԱՄՆ-ում լույս են տեսել Կ. Սիտալի «Գուսաներգեր», «Գիշերեն մինչև լուսաբաց», «Լուսաբացի երգեր», «Սասմա ծռեր», «Կաշտի քաջեր», «Մամ ու Զինը» երկերը։ Նա Հայրենիք այցելության տպավորություններին է նվիրել 3 գիրք՝ «Տեսա մեր երկրի արևածագը», «Արևածագ և առավոտ», «Նոր հորիզոններ»։ Հայպետհրատը 1936 թվականին լույս է ընծայել Կ. Սիտալի «Լուսաբաց»-ը և 1957-ին «Դյուցազնական»-ը։

Մեծարման երեկոյին ներածական խոսքով հանդես է եկել Գրողների միության վարչության առաջին քարտուղար Է. Թոփչյանը։ Կ. Սիտալի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցել է բանասիրական գիտությունների թեկնածու Հրաչյա Գրիգորյանը։

Վեհափառ Հայրապետը Կ. Սիտալի ծննդյան 70-ամյակի և գրական գործունեության 50-ամյակի առթիվ հոբելյարին ուղղել է նոյեմբեր 13 թվակիր օրհնության հետևյալ կոնդակը.

«Անհուն գոհունակությամբ կողջունենք Ձեր գրական վաստակի 50-ամյա հոբելյանը Հայրենի հողի վրա։

Մայր երկրի հարազատ ժողովուրդն է, որ Ձեր անձի մեջ կգնահատե ու կմեծարե իր արժանավոր և հավատարիմ զավակներեն մին։

Հոբելյանական ուրախությանց կմասնակցինք Մենք ևս հրճվանքով և Մեր ջերմագին աղոթքներով։

Եվ կմաղթենք Ձեզի քաջառողջ երկար տարիներ գրական-հասարակական բեղուն գործունեությամբ, որպեսզի նույն տաղանդով և նույն հայրենասիրությամբ շարունակեք Ձեր հայրենանվեր առաքելությունը Սփյուռքի հայության ծոցին մեջ։

Մայր Աթոռ Սուրբ Էմիածնեն և Մեր սրտեն օրհնությո՛ւն Ձեր կյանքին ու գործին։

«Հոգ լեռուք և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»։ Ամեն»։